

Յանկարծ հեթանոս ամբոխը զարհուրելով աղաղակեց. դաժնաց մեջէն աւելի գթասիրտները սուրբը ձեռքերէն ձգեցին. դաժնապետը երեսը մէկդի դարձուց, և օղուն մէջ ջահերուն և կանթեղներուն լուսով արիւնեաների սուր մը կիայլէր, որ ըստ դաժնապետին հրամանին՝ հարուածը տալով դեմնատարած տասրակեց. կիսափակ աչքով կհեծեծէ, յորդահոս արիւնը զգաստ բերանէն վազելով զինքը կնկրկէ. թող գոյ թագաւորը այս փառքին ականատես լինի: Բայց դաժնապետը այս ատեն դաժնաց նայեցաւ և ուրիշ հրաման մի տուաւ, որք զիշատիչ դազանաց նման յարձակեցան ամենքը մէկ Հռիփսիմէի վերայ, և ըզգեստները պատրուելով մերկացուցին զինքը, տանջանարանը կազմուած չորս ցից զետինը դամուած էր, որոց երկուքին ձեռքերը կապելով և երկուքին ոտքերը, բորբոքեցին ջահերը և կանթեղները, և սկսան պարկեշտասուն մարմինը այրել:

Փութա Վայիանէ, գնա հաւատաբխ սանդ տես, ինչպէս թագաւորաց փառքերէն չխարուեցաւ, նոյնպէս մահուան չարչարանքներէն աներկիւղ և անսասան՝ կանթեղներուն բոցերուն մէջ ձինձերելով կասլորի. զգուէ սուրբ մարմինը՝ զոր արժանի չեղան թագաւորք զգուիլ, որ տանց արքայական առաքատը, չընդունեց՝ երկրաւոր մեծութիւնքը. և ինչպէս հոգւով նուիրեալ էր՝ արդ կեանքը ևս Աստուծոյ կրնծայէ. համբոյրէ սրբափայլ մարմնաւ աչքերը՝ զոր դու Աստուածային շնորհաց լուսով արծարծած՝ բազկացդ վերայ զինքը սնու-

ցիր:— Իսկ դուք դահիճք, զթացէք, թողէք որ չարչարանաց ցաւերը անդորրութեամբ քաշէ:

Բայց անդորմ են, նորանոր տանջանքներ կպատրաստեն:— Վոչեց դաժնապետը կրկին, դահիճք սարսափած երեսը նայեցան. և վերջին հրամանը տուածին պէս՝ ոմանք սրբով աչքը կփորեն, ոմանք զողը քարեր կթափեն, և ոմանք ալ դեռ զինքը կենդանի տեսնելով՝ կտոր կտոր կյօշօտեն:

Միւսաւ գոչեց դահիճներէն մէկը. դաժնապետը դարձաւ ամբոխին և ասաց. «որ ոք թագաւորին հրամանը կանարգէ՝ այսպէս կկորսուի», և ձեռքի դաշոյնը պատեանը դնելով՝ նոյն հրամանը դաժնաց ևս տուաւ: Իշեանները կփութան երթալ թագաւորին խնայել, և ամբոխը սարսափած իՎաղարշապատ կդառնայ:

Իսկ մեք երթանք սրբոյն Հռիփսիմէի՝ Աստուծոյ սիրելի Վկային ոսկերքը համբուրելով՝ Հայաստանի փրկութեան համար աղօթենք:

Մ. ՊԱՆԱՆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ժ Ա Ռ Ա Ն Գ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն .

(Ա ն յ է ա լ Է ն է ն ճ ա յ է ա լ)

Ինչո՞ւ ուրեմն չենք կարող եղբայրացնել, որ մի սրուշեալ տեղի վայրենի կենդանիներ ի մի քանիսի մէջ էլ կարող է երեւիլ որեւիցէ առանձնական յատկութիւն կազմակերպութեան մէջ. զոր օրի-

նակ, մարմնոյ մասների մեծութիւնը, գոյնը, եւն՝ որոնք անշուշտ փոխանցուած են սերնդին, չնայելով որ զուգութիւնը լինում է պատահական կամ առանց ընտրութեան:

Որովհետեւ այսպիսի պատահական յատկութիւնների ժողովածուները շատ երեւելի անգն է բռնում մի քանի բնագիտական հետազոտութեանց մէջ (զոր օրինակ՝ մանաւանդ Վարվինի), ապա զովնք մի քանի փաստեր էլ ապացուցանելու համար ժողովածուները պատահական յատկութիւնների ծնողներին միայն մէկի մէջ:

1791 թուականին մի Մասսաչուսէտըսյի*) այգեպան՝ Սէթ — Ուրայթ առնունով՝ ունէր մի փոքրիկ հօտ, որ բազկացած էր մէկ խոյից և 12 կամ 13 ոչխարներից, ոչխարներից մէկը մի անգամ ծնեց մի այգեկերպ գառն և իկայն մարմնով և կարծ ու ծուռ ոտներով: Սէթ — Ուրայթը յառաջացրաւ մի մեծ բազմութիւն այգեկերպ ոչխարների, ինչպէս գառն էր, և ահա ինչ նպատակաւ: Մասսաչուսետսի այն կողմում, ուր բնակւում էր Սէթ — Ուրայթը, արտերը բաժանւում էին դաժը ցանքերով, իսկ ոչխարները լինելով ճարպիկ և ուժեղ՝ առանց դժուարութեան ցատկոտում էին աղատարար և ընկնում էին ուրիշի արտեր: Եյս բանը ի հարկէ պատճառ էր դառնում շատ խռովութիւնների հարեաններին մէջ, այնպէս որ Սէթ — Ուրայթին մի յարմար միջոց էր սպասում: Իւր ա-

հա նա մտածեց. եթէ բոլոր ոչխարները ունենային կարծ ու ծուռ ոտներ, այն ժամանակ ի հարկէ նրանք չէին կարող ցատկել ցանկի միւս կողմը: Եյս մտածմանց համեմատ, երբ գոռը մեծացաւ, նա մորթեց առաջուկը արուին (խոյին) և արձակեց հօտի վերայ սորան, որովհետեւ այս այգեկերպ կենդանին արու էր: Եյսպիսի խռովութիւնների հետեանքն և զան կամ բոլորովին հասարակ գառներ, կամ կատարելապէս ծուռ ու կարծ ոտներով, իսկ երբեք չէր պատահում երկուսի խռովութիւնը ունեցող ոչխար: Մի քանի տարւում այգեպանը յառաջացրաւ մի մեծ բազմութիւն նոր սերնդի և նրանց շատ մասը այնուհետեւ տարածուեցաւ բոլոր Մասսաչուսէտսի մէջ: Տարբազգաբար՝ ոչ մէկը չէր մտածում գոնէ մի կմախք կազմելու (գիտութեան յիշատակի համար), և ինչպէս հաւանական է նորա համար, որ այս սեռը դարձաւ հասարակական և անօրական, որ նորա վերայ ուշք էլ չէին դարձնում. ինչպէս երեւում է՝ այժմ այս ցեղը բոլորովին անհետացած պէտք է լինի: Երանց անհետանալուն առաւել պատճառ եղան ընկնող անուանուած ոչխարները, որոց բոլորը աւելի բու էր կարճանկայ ցեղի բուրդից՝ և ինքեանք մերիկոսները շատ հանգարտ էին և չէին ցատկում ուրիշի արտեր, այնպէս որ փոքր առ փոքր կարճատևների բոլոր ցեղը անոգուտ դատնւով՝ անհետացաւ և ինչպէս երեւում է՝ բոլորովին ջնջուեցաւ: Մայթացի վեց մասնեայ Էօրայիս Սօլէյան՝ 22 տարեկան հասակում պատկուեցաւ մի հասարակ հինգամանեայ օրիորդի հետ, որով-

(*) Մասսաչուսէտսի Միոցեալ նահանգների արևելեան կողմում մի նահանգ է:

հետեւ Մալթայ կղզում՝ ըստ երեւում թին՝ վեցմասնեայ օրիորդ չկար։ Այս ամուսնութեան հետեւեղն այն եղաւ որ ծնունդան 4 զաւակունք՝ մեծը նուցանեց Սալվադօր անունով՝ կատարեալապէս վեցմասնեայ էր իւր հօր նման, երկրորդը Պէտրոյ՝ ունէր հինգ հինգ մասն ձեռների և ոտների վերայ, բայց նրանցից մէկը անկանոն էր և ցոյց էր տալիս ձրդ տու մն գէպ ի փոփոխութեան, երրորդը՝ Մեղբէրս՝ ունէր ուղիղ կարգաւորուած ձեռներ և ոտներ, հինգական մասներով, չորրորդը՝ աղջիկ Մարիամ՝ թէև ունէր նոյնպէս հնգական մասներ, բայց ձեռքերի մեծ մասները (բոյթ) անկանոն էին և ցոյց էին տալիս ձգտումն գէպ ի վեցերորդը կազմելու։

Այս ամուսնակները մեծացան և կատարեալ հասակ առնելով, բոլորն էլ պատկուեցան և ի հարկէ այս ամուսնութիւնները կատարեալ էին հասարակարար հնգմասնեայ օրիորդների հետ։ Վոցա հետեւանքն առ եղաւ։ Սալվադօրը չորս զաւակ ունէր, նրանցից երկու մեծ աղայքը և մի աղջիկը բոլորովին վեցմասնեայ էին, ինչպէս և պապը, չորրորդը ունէր միայն հնգական մասներ։ Պէտրոյը նոյնպէս ունէր չորս զաւակ, նրանցից երկուսը աղջնակներ՝ վեցմասնեայ էին ձեռներով և ոտներով, երրորդը՝ աղջիկ՝ ունէր վեց մասն աջ ձեռի վերայ, իսկ մի օտարաները կտրուեալ էին, չորրորդը՝ աղայ՝ հնգմասնեայ էր ոտներով և ձեռներով։ Մեղբէրս, որ իսկզբանէ բոլորովին կատարեալորձուած էր, շատ որդիներ ունէր և բոլորն կանոնաւոր զարգացած ձեռներով և մասներով։ Մարիամը հինգմասնեայ

նեայ ազամարդու դնաց և ունէր չորս զաւակ, որոնցից մեծը՝ աղայն՝ ունէր վեցական մասներով ոտներ։

«Վարձները մեր ուշադրութիւնը, տուած Վեկային, այս անսովոր երեւոյթի վերայ, դուք տեսնումք այստեղ պատահական փոփոխութիւն, զայն՝ ինչ որ մեք անուանումք հարմարեան (անկանոնութիւն, օպպոզիթիւն), այս հաշմութիւնը կամ գէպ ի փոփոխութեան ձրդու մը առջին քայլում տկարանումէ զուգուելով կանոնաւոր դարգացած կնոջ հետ։ Մենք բոլորովին իրաւունք ունինք սպասելու, որ եթէ հաշմութիւնը ևս կրկնուած մէ այդպիսի խառնուրդից յառաջացած զաւակների մէջ, նա բաժանուած ուղղապէս երկու տարրների (սկզբունքներ) մէջ, այս ինքն՝ զաւակների կէտը կ'առանգէ հօր կազմութիւնը, իսկ միւսը կ'մնայ կանոնաւոր և կատարեալ զարգացած մօր ազդեցութեամբ, բայց խկապէս երեւում աւելի առաւելութիւն հաշմական յատկութիւնների։»

«Այս հետեւանքը տկարանումէ, թուլանումէ կրկին զաւակների ամուսնանալով կանոնաւոր զարգացած կանոնց հետ, բայց և այստեղ շեղելով այս տկարացուցանելուն՝ անկանոնութիւնը դիտադանցումէ։ Երբեք ինչ կապահետք՝ եթէ ամուսնանալին բոլորովին հաշմային նախապայման, զոր օրինակ՝ եթէ Սալվադօրի երկու որդիքը պսակուէին իւրեանց հօրեղբայր Պէտրոյի աղջիկեանց վերայ։ Վրանք բոլորը, ինչպէս վերը ասացինք, ունէին ձեռների և ոտների վերայ վեցական մասներ։ Եւստ հաւանական է, որ նրանց զաւակները կ'ենէին անկանոն նա-

խազաղափարի զարգացման շարունակողները: Մեք տեսինք արդէն, որ Մարիամի չորրորդ զաւակի մէջ դէպ ի անկանոնութիւն ձգտումը (որ արդէն թուրացած էր երկրորդ սերնդում) անհետանում է երրորդում, մինչդեռ Միգրէասի որդիները, որ անկանոնութիւն չի եղել առաջին սերնդում, բոլորովին չունին անկանոնութիւն: Այս պատահմունքը լաւ օրինակ է մեզ և ապացոյց, որ բնութիւնը ձգտում է հաստատել միանգամ եղած փոփոխութիւնը: Չնայելով, որ մեր հետադատած փոփոխութիւնը ոչ մի օգուտ չէ բերում, այնու ամենայնիւ ձգտումն դէպ ի միենոյնը կրկնելու այնքան սաստիկ է, որ կանոնաւոր նախատիպի հետ էլ միաւորելուց յետո՛ւ այս առանձնութիւնը փոխանցւում է երրորդ սերունդի:

Լիզուարդ Լամբերտոսի բոլոր մարմինը, բաց ի երեսից և ձեռի ափից, ծածկուած էր եղջերային ուռոյցներով և նորա բոլոր վեց զաւակները թէև ծնւում էին հասարակ մորթիով, բայց վեց շաբաթից յետ սկսում էին միենոյն անսովորութիւնը ներկայացնել մորթու վերայ. նրա որդիներից հինգը մեռան անպաւակ. բայց մէկը՝ մնացածը՝ ամուսնացաւ. նրա որդիքը ունէին միենոյն յատկութիւնը, որը այսպիսով մինչև հինգ սերունդ տեւեց և երևելով միշտ միայն տղամարդիկների վերայ: Ժառանգականութեամբ նոյնպէս փոխանցւում են զանազան ճաշակներ դէպ ի կերակուրները. նկարագրուած է մի ընտանիք, որը երեք սերունդ շարունակաբար ունէր սաստիկ զղուանք բոլոր հիգուկ մարմիններին, որը նկատել է ինքն Լիւկասը: Միւս ընտանիքները ունին այն-

պիսի առանձնութիւն, որ բոլորովին չեն կարողանում ուտել մի օրեկից կերակուր. զոր օրինակ՝ պանիր, օրի հոտը անգամ բաւական է արդէն ուշաթափութիւն պատճառելու այդպիսի մարդկերանց: Յայանի են պատահմունքներ, որ դէպ ի միսը զղուանք փոխանցուել են ընտանիքում մի քանի սերունդ: Հոտանդիայում ապրում էր մէկ մարդ, որ սաստիկ ցանկութիւն և սէր ունէր դէպ ի մարդկային միսը. նորա աղջկը թէև ծննդեան առաջին տարուց որբացաւ, որովհետև ծնողքը պատժուեցան, այնու ամենայնիւ սաստիկ սէր ունէր այդպիսի մսի:

Չէն կարող արդեօք այս պատահմունքներս մեզ բացատրել թէ՛ ինչու մի քանի մերձաւոր կենդանեաց ցեղեր հակումն ունին մի օրեկից կերակուրի՝ և զղուանք նրան՝ որով կերակուրում են նրանց մերձաւոր ցեղերը: Մինչև անգամ մի քանի հիւանդութիւնների հակումն փոխանցւում է ժառանգաբար. քննել են ընտանիքներ, որոց մէջ կուրութիւնը, որ պատահում է մի որոշեալ հասակում, փոխանցուել են ժառանգաբար: Մի քանի ուսումնականներ մինչև անգամ առաջարկում էին կոյր ձիեր ստանալու փորձեր, զուգելով այնպիսի անհատներ՝ որոնք ունին հիւանդութիւն աչքերի մէջ և ծննդներից հակումն ունին կուրութեան:

Հասերը՝ ժառանգականութեան այսպիսի պատահմունքները բացատրում են իրրեւ ընդհանրապէս երեւոյթների միասին գուզադիպուած. զոր օրինակ՝ ուսումնական Բօկլը՝ հետեւեալ միտքն է յայտնում: «Մեզ շատ անգամ ապուստեն ժառանգական ձիւքերի, ժառանգական

մեղքերի և բարեգործութիւնների համար. բայց իւրաքանչիւրը, ով որ կկամենայ գործը քննել բանադատաբար՝ կհամոզուի, որ մեք ապացոյց չունինք այդպիսի ժառանգական յատկութիւնների: Միջոցը, որով ապացուցանում են դորա կարելութիւնը, չափազանց անհիմն է: Ժողովում են մտածական առանձնութիւնների մի քանի յատկութիւններ, որ ունին ծրնողքն էլ, որդիքն էլ, և եզրակացնում են՝ որ այս յատկութիւնը ժառանգական է: Այսպիսի միջոցով կարելի է բացատրել մի դրութիւն՝ ինչպէս հաճելի կլինի, որովհետեւ իւրաքանչիւր հետազօտութեան մեծ դաշտավայրի մէջ կգտնուին բաւականին պատահական համակցութիւններ, որ կազմուի մի որեիցէ եզրակացութիւն այն հայեացքի՝ զոր մեք կամենում ենք ապացուցանել:

“ Զէ կարելի չխոստովանուիլ, ասում է Նիւթը իւր Եւթայ կենաց մարդապահօնի գրքի մէջ թէ՝ ժառանգականութեան վերաբերեալ ապացուցական պատահուելներից շատերը՝ ենթարկուած չէին ամենահարկաւոր կրիտիկայի, և թէ նրանցից շատերը անկար են բոլորովին. բայց կընդունի՝ արդեօք իւր վերայ Պարոն Բոկլը հրքելու թէ՝ մարդոց զանազան հակումների առանձնութիւնները կախումըն ունի մարմնակազմութիւնից: Աթէ նա չէր ընդունում իւր վերայ զայս հրքելու, ապա նրա կասկածանքը անհիմն է, որովհետեւ մի ստուերաչափ անզաւ կասկածանք չկայ թէ՝ կազմութիւնը փոխանցում է ժառանգաբար, իսկ կարող չէ ասել, որ պատահական զուգադիպումներով են մնում անփոփոխ զանազան

կենդանիների զանազան ցեղերը, որ սորա համար է բուլդօգը (bouledogue շան մի տեսակն է) նման Բուլ-դոգին և Թէրիէրի (նոյնպէս շան մի տեսակն է)՝ որ Բուլ-դոգի խառնուրդը նման է և Թէրիէրին և Բուլ-դոգին: Աս չէ կարող ասել, որ պատահումների ընթացակցութեամբ հրքաները բոլոր աշխարհիս վերայ նման են միւս հրքաներին, մինչդեռ այս նմանութիւնը պատահանում է միայն միշտ հրքանների իւրեանց մէջ ամուսնակցութեամբ և ուրիշ խառնուրդ հեռացնելով: Աս չէ ասել, որ պատահումքն է պատահում կարճեղջիւրիս կենդանիները կամ աղաւնիները և տալիս է շան կամ ձիու տոհմագրական ցուցակին ոսկեայ փողիւրի արժողութիւնը: ”

“ Աթէ ծնողները չտային, շարունակում է նա (Նիւթը), սերնդին իւրեանց մարմնի կազմութիւնը, իւրեանց առանձնութիւնները և գերազանցութիւնները, չէր լինիլ աշխարհիս վերայ ոչինչ նման նրան՝ ինչ մեք անուանում ենք ցեղ. եւ: Ամենահասարակ փողոցի շունն էլ կունենար կարողութիւն լինելու այնքան թանկագին՝ ինչքան և ամենալաւ սեռի շունը: Բարակը (շուն) կարող էր որսի մէջ հրմուտ նկատող լինիլ՝ և բռնակիր ձին յաղթանակ կստանար արշաւահանդէսներում: Բայց ամենօրեայ մեր փորձերը մեզ համոզում են, որ անկարելի է այս: Պիտութիւնը մեզ ասում է, որ պատահումք չկան: Մարմնակազմութիւնը մեզ սովորեցնում է, որ յետադիմ միշտ և անպատճառ կժառանգէ ծնողների կազմակերպութիւնը. իսկ եթէ կազմակերպութիւնը փոխանցում է, ապա նրա հետ

պետք է փոխանցուին և ձգտումներ ու
ընդունակութիւնները:

Եթէ մեր ընդունիլը, որ ժողովուրդ-
կանութեան վերաբերող ժողոված փաս-
տերեց, շատերը բանագատութեան չեն
պատասխանում, սակայն մեր ունիլը և մի
քանիսը, որոնք կասկածանքի ենթար-
կուիլ չեն կարող: Բայց, այնպիսի հարց-
մունքներում, ինչպէս ժողովականու-
թիւնն է, մէկ հիմնաւոր փաստը կնշմանկե
աւելիքան զհարկւր անհիմն փաստեր փաստ
որոյ ունենալով մի քանի այդպէս հաս-
տատ փաստեր, մեր կարող ենք ընդունել
կրբւ ամենահիմնաւոր դրութիւն: Պա-
տահական խոտորմունքները և հակումնե-
րը կարող են փոխանցուիլ յիանալիքնե-
րին առանց ընտրելու անհամեմատ և կա-
րգ և լինիլ պատճառ բնական ցեղերի
կազմութեան:

Ա. ԲԱՆԱՅԱՐԱՆՆԵՐ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՈՒՂԵՒԱՐՈՒԹԻՒՆ *):

Ո՛վ Հայաստան, մեր Հայ եմք,

Քնքմէ ինչու հեռի եմք.

Պարսկաստանի խորունկէն,

Մեր արտիւր քեզ կարօտ եմ:

Օրկիլնի՛ք քեզ յոսնեմ,

Սիրով հողդ համբուրեմ:

Քարնքրդ մէկ մէկ զրկեմ,

Երաստներով ողորեմ:

(*) Թէեւ այս բանաստեղծութիւն մի հմուտ գրչի
գործ չէ, բայց մի զգուշան պարտաւոր եւ եռանդուն
սրտի արգասիք լինելով՝ առաւել արժանի է ուշագ-
րութեան ուստի նաեւ հրատարակութեան:

Միշտ ետեղի է գորով:

Երբ Արթուրան զնացի,

Ուսման գրքեր կարդացի

Երկրագունտի քարտեց մէջ:

Հայաստան շատ սիրեցի:

Մի օր տեսի ի տեսիւս,

Անհնձեթ մի կերպարան:

Ո՛վ պատանի, քո բաղն եմ,

Զքեզ ասաց անդ տանեմ:

Եղբան ասիւ Հայաստան,

Նա է քեզ վերջն ապաստան: . . .

Բ.

Պարսկանն օհնաւ կհաւ:

Դէմքս տրախ փայլեցաւ:

Մանուկ էի ես առաջ,

Ընկերներիս մէջ խիստ քաջ:

Ու Հայաստան՝ ասելով,

Այս առթիւ արտասուր կամիտքեմք հեղինակի յա-
նուն խմբագրութեան ուղղութ՝ գրութենէն հետեւե-
ալով:

Ներկայ ժամանակիս ուսման քաղցրաւուր դան-
դակի արձագանքն արեւմուտքից դէպ ի աշխարհիս
չորս կողմից իւր զօրութիւնն այնքան է տարածել, որ
մինչեւ անգամ կարողացեր է մեզ էլ Պարսից կեդրո-
նի մէջ դարձնուցանել: ու այնքան բարբորել իւր սէրն
մեր սրտերումը, որ հրապարած է դմեղ մինչեւ անգամ
բանաստեղծական գրութեան քեզ տեսլի, այնքան ար-
ժարծեր է իւր կեդանալ բոյն՝ որ մինչեւ Զարկարեթի
էլ է վառեր, ուրախ եմք այս՝ որ ներկայ դարս օգ-
տեր է Զարկարի էլ՝ որ հիմնադրան է դուքս գաղիս
գրաստը Հայաստանի մէջ, եւ կարծեմ որ Աղգն գն-
նէ մասամբ իւր սրտի ուրախ լինի իւր Զարկար բա-
նաստեղծի մասց փորձողի ծննդոցը՝ վերայ, եւ ներս-
լի է կարծեմ նորան, քանզի եւ նորանից աւելի չլինի
պահանջել: Ընդունեն թող նորս երկամիտութիւնը
իւրեւ անուպատական ծաղիկներ իմէջ փշոց բու-
սեալ յարգաւածի յունի հոտ եւ գոյն մեր գրութեան
ձերս, միայն մի նորութիւն ձայ Աղգն համար նոցա
ի թէհրանէն դուքս դան սրտի համարուի, որը կը-
յուսացուի որ՝ Սարգստի մէջ մանեւով՝ մի նոր խրա-
նայ կարող են տալ աւ առաւելն բարբորելով զմեր
սէրն ի ծոցի:

Ընդունեցէր խնդրեմ այս իմ երկամիտութիւնը
որ Պարսկաստանի խորէն առ Ձեզ եմ յղում, որ
հրատարակութեան բաղգաւարութիւնն ունենայ: